



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

Հ Ա Յ

ԿՏՐԻՃՆԵՐԸ...

Պատկեր հայ-քրմական կոխուներից

ԿՆԸ 7 409.

891. 99

Կ-58

ԹԻՖԼԻՑ  
1906

891-99  
5-58 ay

19 NOV 2017

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

# ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ...

Պատկեր հայ-թրքական կռիւներից

1001  
815



ԳԻՆԸ 7 ԿՈՊ.

1906  
ԹԻՖԼԻՍ


ՄՈՏ ՆՈՒՄ 04. 2013

28679


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Էլեկտրոնային տպագրության «ՀԵՐՄԷՍ» լեկտրոնային  
(194)



### ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ



Շէյթանեան նենգութեամբ սարքած հայ-թուրքական կործանիչ կռիւր դեռ չէր դադարել: Վաղեմի սիրասուն, անձնուէր գրկիցներ—հայ և թուրք գեղջուկները—ազգային ատելութեամբ թշնամացած սուր էին բարձրացնում միմիանց վրայ: Եւ ահա գիւղեր ու քաղաքներ, բարգաւաճուն աւաններ եղբայրասպան կռուի դաշտ են դարձել. արիւնը ներկել է արտ ու արօտ, հողը ծածկվել նահատակների դիակներով:

Ն. փոքրիկ քաղաքն էլ միքանի անգամ ցնցվել էր այդ արիւնոտ փոթորկից. յաճախ նրա փողոցները և շրջակայ սարերը պատե-  
րազմի բեմ էին դարձել: Մարդկանց ականջ-  
ները դեռ դժժոււմ էին հրացանների ճարճա-  
տիւնից. հողի տակ ամփոփված դիակները  
դեռ չէին սառել, գազանացած խուժանը  
չէր սթափվել, երբ նորից պայթեց արիւնոտ  
փոթորիկը հայ-թուրք եղբայրների մէջ:

Ամառային օր էր. առաւօտեան մթնշո-  
ղը տեղի էր տալիս ցերեկին: Քաղաքը զարթ-  
նում էր. հայ ու թուրք գործի էին շտա-  
պում, ճանապարհին բարի օր ցանկալով մի-  
միանց: Փողոցները կենդանացան, կեանքը  
եռաց, թէպէտև ոչ նախկին թափով:

Սրեր չէր երևում. նա կարծես խնդրած  
էր յանցաւոր մարդկանցից և ամպերի յե-  
տևում թաղնվել. օդը սառն էր ու ծանր.  
երբեմն միայն մեղմիկ փշում էր քա-  
մի, որ մի տեսակ ճնշում էր մարդու կոկորդը:

Քաղաքից դուրս՝ հեռվում երևում էին  
մարդկանց խմբեր, ձիաւոր ու հետիոտն, ու-  
րոնք արագօրէն շարժվում էին դէպի քա-  
ղաք. նրանք նման էին զինւորական բանակ-  
ների: Քաղաքումն էլ թուրքերը ձեռք ու

ոտք ելած իրար էին խառնվել. թուրք կին  
ու երեսայ բոլորովին չէին երևում. շահէլ  
թուրքերը ինչ որ կապոցներ էին տեղափո-  
խում. շատ խանութներ էլ փակ մնացին:  
Հայերը հետզհետէ լցվում էին վատ նախազ-  
գացումով:

— Հասան, ի՞նչ կայ, ինչո՞ւ էք փակում  
դուքաններդ, հարցրեց մի հայ խանութպան  
իր դրկից թուրքից. ասում են, թէ խմբե-  
րով թուրքեր են մօտենում քաղաքին, այդ  
ո՞վքեր են:

— Ոչինչ, քերվա ջան, միք վախիլ. այդ  
«մերոնք» են գալիս. էսօր մի մեծ քէֆ պի-  
տի սարքենք, պատասխանեց թուրքը նենգ  
ժպիտով:

— Լաւ բան չեմ գուշակում, Հասան.  
երևի էլի արիւն էք ծարաւել, տսաց հայր  
և պատրաստվեց խանութը փակել:

— Բնւմ... յանկարծ լավեց հրացանի  
պայթիւն:

Բնւմ... բնւմ... բնւմ... յաջորդեցին  
երկրորդը, երրորդը և շատերը:

«Սկսվեց» — մրմնջացին մարդիկ այդ շա-  
րաբաստիկ խօսքը:

Սոսկալի իրարանցումն ընկաւ քաղաքի

մէջ. մահը սաւառնեց. բռնկվեց ճակատամարտը. քաղաքի շրջակայ տափերից էլ լավեցին տրաքոցներ. լուր հասաւ կայծակի արագութեամբ, որ թուրքական բազմաթիւ բանակներ յարձակումներ են գործել հայկական զիւղերի վրայ:

Յանկարծակի եկած հայերը, թողնելով ամեն ինչ առիւնըսուշտ խաթամուտիս, լեղապատառ սկսեցին փախչել. մեծ զորդիւնով փակվում էին աների դռներն ու պատուհանները. անզէն մարդիկ անկիւն էին փնտրում պատասպարվելու յետևից տեղացող արձձէ գնդակներից. աւելի սրտոտներն էլ առանց յետ նայելու շտապում էին իրանց հարազատների մօտ, նրանց պատիւն ու կեանքը պաշտպանելու և կամ նրանց հետ մեռնելու: Գնդակները վզվզալով—անցնում էին օդը ճեղքելով և նստում հանդիպած առարկայի կամ պատերի մէջ. կամ թէ հանդիպելով փախչողի՝ գետին էին գլորում. թուրքական մասերում թուրքերը մտել էին արզէն պատրաստի դիրքերը և այնտեղից համազարկեր էին տալիս դէպի հայկական թաղերը:

Օդը թնգում էր պայթիւններից. հեռ-

վում լավագորաքոցներն էլ աւելի էին սաստկանում. փողոցներում ընկնում էին զիակներ. արիւնը հոսում էր թարմ վէրքերից և թրջում գետինը: Թուրքերը «եա Ալի» աղաղակներով գրոհ էին տալիս դէպի անպաշտպան հայկական թաղերը. ճանապարհին սրախողխող էին անում հայի կերպարանք ունեցողներին. հետները վերցրած նաւթով ու փալասներով հրդեհում էին յայտնի հայերի տները. յարձակվում էին փակված դռների վրայ, կայցիներով կոտորում, ներս խուժում, բռնաբարում ջահէլ կանանց ու մանկաի օրիորդներին, մորթոտում էին ծրծկեր երեսաներին մայրերի աչքի առաջ և թանգագին իրերը կողոպտելով, անցնում էին:

Փողոցներում գտնվող ոստիկաններն ու մի բուռն պահակները, անկարող լինելով դիմադրելու այդ ահուելի խուժանին, յետ քաշվել, հանդիսատեսներ էին դարձել: Ուրիշ ոչ մի փրկութեան ձեռք կարկառող չը կար անմեղ զոհերին. սուրն ու հուրը, հրացանն ու ատրճանակը, աւերածութիւնն ու թալանը ոտնատակ էին տալիս մարդկային արժանիք ու օրէնքներ. փողոցները հետզհետէ մարդկային սպանդանոցներ էին դառնում և

ժողեզն թուրքերը հայի արիւնն էին խմում:

Բնւմ... բնւմ... սուլում էին գնդակները  
աջ ու ձախ:

Սակայն երկար չըտևեց թուրքերի յաղ-  
թութիւնը. յանկարծ փակված դռները բաց-  
վեցին և խոււմբ-խոււմ գինված հայ երիտա-  
սարգներ դուրս նետվեցին և որոտընդոտ  
ուռաներով, կայծակի արագութեամբ սլա-  
ցան դէպի յոշոտիչ թուրք վոճմակները:

—Վրէժ, տղերք ջան, վրէժ գոռ թշնա-  
մուց, ձայնեց առաջնթաց խմբի հրամանա-  
տարը:

—Վրէժ, միաբերան գոչեցին տղերքը:

Նրանց արտայայտութիւնը գոռոզ էր և  
անվեհեր. նրանք լցված ազգային կորովի  
գիտակցութեամբ, անձնուիրաբար առաջ էին  
արշաւում դէպի անհաւասար ճակատամար-  
տը: Ամեն մէկը մի սուրճ էր դարձել և  
ջարդում էր անխնայ թուրքերին:

Թուրքերը հանդիպելով հայ երիտա-  
սարգների զօրեզ դիմադրութեան, կրկնա-  
պատկեցին իրանց ուժերը:

—Նա Ալի, գոռում էին նրանք և գրոճ  
տալիս առաջ:

—Կոտորեցէք անիծված ջանֆիդայի-

ներին, հրամայում էր ձիաւոր թուրք հրա-  
մանատարը:

Իսկ հայ տղաների շեշտակի զարկերը  
տերևները նման գետին էին փռում թուրքե-  
րի առաջնթաց շարքերին: Հայ ինքնապաշտ-  
պանները ճակատում էին մեծ հմտութեամբ  
և տակախկայով. նրանք աշխատում էին  
փամփուռը իզուր չանցկացնել. երբեմն եր-  
բեմն պառկոտում էին, մտնում էին պատա-  
հած առարկաների քամակը, յետ նահանջում,  
ապա նորից «ուռաներով» դէմ վազում խուռ-  
նիճադանձ հօրդաններին:

Թուրքերը շատ-շատ էին. եթէ հայ սը-  
ղերքի ամեն մի գնդակը միքանի զոճ առ-  
նէր, դարձեալ չէր բաւական բոլորին յաղ-  
թահարելու. ուստի տղաներից մէկը, խմբա-  
պետի հրամանով, դիմեց ուռմբի աջակցու-  
թեան: Նա փաթաթվելով պատշգամբի սիւ-  
նին, ճարպիկութեամբ վեր մտելեց տանիք-  
թուրքերը, նկատելով նրան, հրացանները  
ուղղեցին դէպի նա, բայց վրիպեցին:

—Նշան առէք այդ կախարդված ջան-  
ֆիդայուն, փրփուրը բերանն առած հրամա-  
յեց թուրք ադան:

Սակայն երիտասարդը տանիքների վրա-

յով թռչկոտալէն արդէն մօտեցաւ թուրքական բանակին և վերից նետեց մի մեծ ուռմբ:

— Բնմբ, ահուելի դղրդիւնով պայթեց ուռմբը և միքանի տասնեակ թուրքերի դիակներ էլ աւելացրեց ընկածների վրայ:

Սկսվեց վայրենի իրարանցում. թուրամորթ բէգերը թողին իրանց ստորադրեալ բանակը և առաջին փախչողը եղան. նրանց յետևից անլիքոր խուժանը այլևս առանց յետ նայելու, գլխիկորոյս, իրար հրելով, դիակները կոխկրտելով փախան դէպի թուրքաց թաղերը. երիտասարդ կովոդները մտան դիրքերը: Իսկ հայ սղերքը «կէցցեն հայերը» գոչելով հալածեցին փախչող թշնամիներին:

Քաղաքի մի քանի տեղերում միաժամանակ երեացին հայ ինքնաուղաշտպանների խմբակներ, որոնք մէկը միւսից անձնուէր, հերոսաբար կովելով, ջարդ ու փշուր արին բիւրաւոր թշնամու սպառագէն բանակները: Հայկական մասում սրտոտ ջահել կանայք, ծեր տղամարդիկ ինամում էին վիրաւորներին: Նրանք հաւասար ինամքով և գթասրտութեամբ փաթաթում էին արիւնարբու թուրքի վէրքերը, այն թուրքի, որը թերևս

այդ ձեռքերով սպանել, յօշոտել էր խնամողների հարազատներին: Առանց զգուանքի հայ կանայք ձեռքերի վրայ տանում էին վիրաւորներին, պառկեցնում յարմարաւոր տեղերում և ամեն միջոց գործ դնում արիւնհոտութիւնը կանգնեցնելու:

— Օձը տաքացնողին է կծում, բացականչեց մի պատանի գայրացած և զրպանից հանելով փոքրիկ դանակը, վրայ ընկաւ իրանց բակում ձգված վիրաւոր թուրքին:

— Յետ քաշվիր, դա ազնուութիւն կամ քաջութիւն չէ, սաստեց դեռատի քոյրը, որ փաթաթում էր թուրքի վիրաւոր թեր:

— Ա՛խր, Լուսիկ, գուցէ հէնց սա սպանեց մեր եղբօրը. մի՞թէ արժէ դրանց խնամել, ասամները կրճատցրեց պատանին և վրէժխնդրութեան արցունքն աչքերին, յետ քաշվեց:

Երկինք գետինք իրար էին անցել. քաղաքը դղրդում էր արհաւիրքի մէջ. հրդեն, ծուխ, արճճէ գնդակներ, հրացանների անընդհատ ճարճատիւն, ատրճանակների որոտ և արեան մէջ թաւալվող մարդկային դիակներ... ॥

—Տղերք ջան, չը թուլանաք, լավում էր որոտների միջից:

Հետզհետէ կռիւը ստացաւ սուրիշ կերպարանք. հայ կտորիճները իսպառ վանեցին թուրք խուժանին գէպի իրանց բները: Թուրքերն էլ, հայերն էլ արդէն մտել էին սրտշ գիրքեր և այնտեղերից էին կրակում:

Մի տեղ միայն, թուրքաց սահմանում գեռ շարունակվում էր կատաղի կռիւը. մի խումբ հայեր ընկել էին մօսիններով ու մաուզէրներով զինված հազարաւոր թուրքերի միջև և առիւծի պէս կռվելով ընկնում էին մէկը միւսի յետևից:

—Կռվել մինչև արեան վերջին կաթիլը և ողջ-ողջ չընկնել այս գազանների ձեռքը, ազադակում էր տղերքի խմբապետը, որ մի գեղեցիկ, առոյգ երիտասարդ էր: Արդէն պարպում էր հայերի փամփուշտը, իսկ ուռմբերը վազուց ձգված էին և ահազին զոհեր առած: Մի բոպէ ևս, և առիւծ տղերքը մնալու էին առանց փամփուշտի. թշնամին ցնծում էր. նա իր խելքով և ուժով չէր կարողանում յողթել այդ մի բուռն քաջերին, ուստի սպասում էր նրանց ռազմամթերքի սպառման, երբ արդէն ողջ-ողջ կը

բռնէին բոլորին և հազարաւոր տանջանքնե-րով կը նահատակէին նրանց:

Այդ բոպէին արագ մօտենում էր օգնութեան կանչած մի հայ խումբ մի ձեռու-նու առաջնորդութեամբ: Նրա մագերը սպիտակել էին, երեսը կնճիռներով ծածկվել, բայց Ֆիզիքական առողջութիւնը չէր ընկճվել և նա մի գեռահաս երիտասարդի նման առոյգ քայլում էր, մօսինի հրացանը ձեռքին:

—Տղերք ջան, ձեր բազուկներին մատաղ, կրակեցէք. բայց զգոյշ, մերոնց չը խփէք. խրոխտաց ձեռունին:

Ռրտացին տղայոց հրացանները. թուրքերը շուարեցին: Ծերունի խմբապետը ամեն ջանք գործ էր դնում նախ ազատել կրիտիքական վիճակում գանվող իւրայիմներին: Նա ոգևորվեց. երիտասարդական արիւնը եռաց նրա բազմամեայ երակներում և նա արիւնը գլուխն առած առաջ էր քաշում իր մի բուռն քաջերին: Նրանց հանդէպ զբանվող թուրքերը աստիճանաբար նահանջեցին: Իսկ առաջին խմբի կենդանի մնացած մի քանի երիտասարդներ, փամփուշտ չունենալով, ասրճանակներով և խանչալներով էին

պաշտպանվում, թուրքերն արդէն շատ էին մօտեցել, մի վայրկեան ևս և հայերը կորած էին: Ծերունին նկատելով սպառնացող վրասանգը, այլևս չը համբերեց և «Տղերք, ազատենք մերոնց» գոչելով գրոհ ավեց թուրքերի վրայ: Մօտենալով, նա յանկարծ ճանաչեց զինւորներից զրկված քաջ խմբապետին, դա իր հարազատ որդին էր:

— Իմ որդին, Արուսէն է, գոչեց նա և հրացանը ուղղեց նրան մօտեցող թուրք բէգին, որը խանչալը բարձրացրել էր երիտասարդի գլխին. մի ակնթարթում գնդակը զիպաւ թուրք հրամանատարի կրծքին, վայր գլորեց ձիուց. շեշտակի զարկերը անդաջին մէկը միւսի յետեից և թուրքերը անկարող եղան մօտենալ հայ ազերքին: Ծերունին իր խմբով արդէն շատ էր մօտեցել և թուրքերը վհատվելով, նորէն փախուստի դիմեցին:

Հայր ու որդի փաթաթվեցին իրար վզով և համբուրվեցին: Այդ վայրկեանին որտեղից որ էր մի գնդակ կարու երիտասարդի ազգրին և ծակելով անցաւ:

— Ես վիրաւորվեցի, հայրիկ, ասաց նա և բռնեց վէրքը:

— Ոչինչ, որդի, սակայն դու շատ-շատ

գոհեր ես առել գազաններից քո փոքրիկ խմբով. փառք ընկածների յիշատակին, կէցցեն կենդանի մնացած հայ կարիճները, ասաց ծերունին և որդուն համոզեց յետ դառնալ, վէրքերը խնամել: Միքանի երիտասարդներ ուսերի վրայ առան իրանց վիրաւոր խմբապետին և տարան, իսկ ծերունին աւելի ոգևորված և զայրացած շարունակեց կռիւը իր որդու վրէժն էլ հանելու:

Թուրքական մասերից փախած թուրք կանանց ու երեխաներին սիրով հովանաւորում էին հայերը և պատասպարում իրանց բնակարաններում: Անգէն մնացած հայ երիտասարդները սպանվածների զէնքերն էին հաւաքում և խմբեր կազմելով, դուրս գալիս կռվելու:

Կէսօրից անց էր. քամին աննկատելի կերպով ուժեղացել էր և բորբոքում էր հրդեհները. կարծես բնութիւնը զայրացած լինէր արիւնախում թուրքերի վրայ և ուզում էր իր կողմից էլ պատժել նրանց. նա հեռագհեռէ սաստկանում էր և հայկական վառվող անների բոցերը նետում էր թուրքերի անների վրայ. և անա թուրքաց թաղերում բռնկվեցին հրդեհներ, որոնք շատ կարճ մի-

Չոցում լափեցին ամբողջ թաղամասեր:

— Տղերք ջան, խրոխտ ձայնով խօսեց առաջապահ գիրքի կամբապետը. նրանք շատ են այրել մեր տուն ու տեղը. այժմ հերթը իրանցն է. «ակն ընդ ական» իրանց պաշտելի խօսքը թող իրականանայ. մենք հանգիստ պիտի զգանք մեզ խղճով. մենք չայրեցինք նրանց թաղերը. բայց զայրացած բնութիւնը ըստ արժանւոյն պատժեց նրանց. թող այս անգամ այնպիսի մի անուելի դատ տանք, որ նրանք հանգստանան, սթափվեն և մեզ էլ հանգիստ թողնեն: Բաւական է յանցաւոր ներողամտութիւնը և անամային համբերողութիւնը մեր կողմից. թող իմանան, որ հայ երիտասարդները սուրճից էլ կատաղի և հզօր են: Թող գիտենան, որ հայ ազգը հեշտ կլանվելու ազգ չէ: Չը թողնէք կրակը հանգցնել, անանխնայ նշան բռնէք. դէհ, ձեր քաջ բազուկները գործադրեցէք

Կրակէ լեզուները աստիճանաբար մեծանում էին և երևում ազատ մնացած թուրքաց թաղերում. ոչ ոք չէր կարողանում հանգցնելու փորձ անել. հայ երիտասարդների անվրէպ ուղղած գնդակները տեղն ու

տեղը գործում էին ըմբոստ թշնամուն:

Մինչ այդ քաղաքի մի կողմից, հակառակ հայերի սպասածի, մի խումբ լաւ զինված թուրքեր գաղտագողի կերպով աշխատում էին ներս խուժել հայկական մասը և շփոթի ենթարկել հայերին. նրանք ունէին և մի թնդանօթ, որի ձեռք բերելը հանելուկ էր հայերին: Նրանք արդէն բաւական առաջ էին անցել, երբ նկատվեցին հայ կովոզներից: Հայ խումբն էլ իր հերթին խոքամանկութեան դիմեց. նա չը դիմադրեց և երևան չը հանեց իր ներկայութիւնը. երբ թուրքերը իրանց ազատ զգալով պատրաստվեցին յարձակվել հայերի վրայ, այդ վայրկեանին հայ խումբը ուժերի և գնդակի կարկուտ թափեց թուրքերի վրայ. սրանք հաղիւ կարողացան թնդանօթի մի զարկ տալ, որը անփսաս անցաւ:

1001  
518

— Մահ գոռ թշնամուն, բացականչեցին տղերքը և տաքացան:

Թուրքերը, ըստ իրանց ցեղական յատկութեան, գլխները կորցրին. ամեն մէկը աշխատեց իր գլուխը ազատել պայթած ուժերից. շատերը նոյնիսկ դէն ձգեցին հրացանները, աւելի թեթև վազելու համար.

հայերը, չընայած իրանց սակաւաթիւ լինելուն, հալածեցին նրանց և գրաւեցին նրանց թնդանօթը: Այս լուրը կայծակի արագութեամբ դիրքից դիրք անցաւ և հայ ուղմիկները ցնծացին: Թնդանօթը գետեղվեց ամենակարևոր դիրքերից մէկում:

Մութն ընկաւ. խաւարը պատեց քաղաքի շրջակայքը. աստղեր բոլորովին չէին երևում. ամպերը և թանձր ծուխը վարագուրել էին ամբողջ հորիզոնը. թուրքական թաղերը բոցավառվում էին և իրանց ահազին լոյսով լուսաւորում էին մեծ տարածութիւն. հրացանաձգութիւնը դադարել էր և երբեմնակի միայն թուրքերի կողմից լսվում էին անկանոն զարկեր, որոնց պատասխանում էին հայերը հատ-հատ տրաքոցով:

Քաղաքն ստացաւ դժոխքի կերպարանք, զարհուրելի տեսարաններով. մարդկային ձենձերահոտը տարածվել էր չորս կողմ. այս ու այն կողմ թափթփված վիրաւորները սրբտաճմիկ հառաչանքներ էին արձակում, տանջվում էին, չարչարվում մորմոքվող վէրքերից, և անխնամ մնալով, անշնչանում էին արեան ծորանքի մէջ: Մարդկանց դիակները հետ միքանի տեղերում ընկած էին նաև

սպանված անասունների դիակներ: Թւում էր, թէ պատերազմի դաժան աստուածը դիւային քրքիջն երեսին կանգնած էր այդ դժոխքի դիմաց և մոլեգնաբար հրճվում էր մարդկութեան աւերածութեամբ:

Հրացանաձգութիւնը դադարեց իսպառ. կռվողները, ուժասպառ եղած, սպասողական գրութեան մէջ էին իրանց դիրքերում: Ըստ երևութին՝ թափված արիւնը սթափեցրեց նրանց և նրանք շուտով հաշտութեան ձեռք կը մեկնէին միմիանց:

Սակայն դա մի կարճ զինադադար էր. թուրքերի ազգային ինքնասիրութիւնը խոցված էր նրանով, որ մի բուն ըմբոստ հայեր աներևակայելի քաջութեամբ ջարդ ու փշուր արին նրանց հազարաւոր զինված բանակները: Նրանք սպասում էին դրսի օգնութեան. իսկ հեռատես հայերը վաղուց սարերում դիրքեր բռնել, կարել էին առաջ խաղացող թուրք խմբերի ճանապարհը: Յոյսը կարելով օգնութիւնից և տեսնելով լուսաբացի մօտ լինելը, թուրքերը վճռեցին մի վերջնական գրոհով յաղթութիւնը յետ խել հայերից և մինչև վերջին հայը, սկսած մանուկից մինչև ծերունին, սրի քա-

շել, ու քաղաքում իսպառ կարել հայի հոտը: Նրանք հաշտութեան պատրուակով փորձեցին հայերին դուրս բերել դիրքերից, միամտացնել և ապա վրայ տալ:

— Գնա, յայտնիր ձերոնց, պատասխանեցին հայերը ուղարկված թուրքին, որ այլևս ձեր ստոր պօլիտիկան մեզ չի կարող թակարդը գցել. տարի ու կէս դուք կատաղած գազանների նման մեզ յոշոտեցիք և մեր արիւնը խմեցիք. աւերեցիք գիւղերն ու արտերը և մեզ անօթի թողիք. մենք համբերում էինք քրիստոնէական ներդամութեամբ. իսկ դուք ոգևորվեցիք արեան գետեր կազմելով. այժմ ակամայից մենք էլ զէնք վերցրինք. միայն մի լինէք նամարդ թշնամի, այլ դուրս ելէ՞ք երես առ երես, կուրծք առ կուրծք. գիտցէք, որ ամեն մի հայ երիտասարդը մի առիւծ է եղել և առիւծ էլ կը մնայ հայի արիւնը ծծող անարգ թըշնամիների դէմ: Մենք մեր ժանգոտած այնալուներով ու սրերով, ատրճանակներով ու հովուական մահակներով անվեհեր կանգնած ենք ձեր մօսիների, մաուզէրների ու բերդանների դէմ: Տեսէք, նայեցէք ձեր շուրջը. միթէ ձեր ականջները խլացել են ձեր հա-

րագոտ կանանց ու երեխաների մահուան հեծեծանքների առաջ. ձեր աչքերը կուրացել են նրանց գալարումների և թաւարման առաջ. տեսէք, մորթուված մարդիկ հաւի նման թրպրտում են արեան մէջ, իսկ դուք՝ դեռ արիւն էք պահանջում. դուք մեզ սովորեցրիք «ակն ընդ ականի» անհրաժեշտութիւնը ձեզ նման գազանների դէմ:

Թուրքերը ստանալով այս կտրուկ պատասխանը, վճռեցին ինչ էլ որ լինի մի անգամ էլ փորձել իրանց բաղդը:

— Տղերք, պատրաստ կացէք, վճռական ըրողէն է, լավեց հայ դիրքերում:

Նւ արդէն պատրաստ էին քաջերը. նրանք կովի սկսված ըրպէից մի փշրանք հաց բերանը չէին դրել. թէև արդէն քաղցած ու ծարաւ էին, բայց նրանք չէին զգում. հոգեկան լարուածութիւնը ամրապնդել էր բոլորին և նրանք պատրաստ էին օրերով քաղցած, ծարաւ և անքուն կովել իրանց ազգի, ընտանիքի և պատուի պաշտպանութեան համար:

— Բամբ, լավեց թուրքական դիրքերից:

— Բամբ, պատասխանեցին հայերի համազարկերը:

Սկսվեց կռիւը աւելի մեծ չափով. թուրքերը մեքենայական արագութեամբ գնդակ էին տեղում:

— Մահ կամ յաղթութիւն, բացականչեցին տղերքը և լարեցին ուժերը:

— Շա ալի, կանչելով թուրքերը միաժամանակ դուրս պրծան իրանց մասերից և զրոհ տուին դէպի հայկական դիրքերն ու թաղերը. հայ կռւիողները իրանց դիրքերից էին գնդակածում մօտեցողներին. իսկ երբ թուրքերը, տալով բազմաթիւ զոհեր, շատ մօտեցան տղերքին և խուժելու էին առաջ, տղերքը դէմ ելան և սկսեցին ձեռնամարտը: Շողշողացին սրերը, փայլեցին խանջալները, որոտացին ատրճանակները. մարդիկ ընկան հնձված հասկերի նման: Թուրք խուժանը այն աստիճան շփոթվեց, որ իրար էր կոտորում. կամաց-կամաց անյայտացան խուժանի հրամանատար աղալարներն ու բէգերը: Իսկ թուրքասիրտ ամբոխը չը դիմացաւ հայ կտրիճների զօրեղ ուժին. նա յետ դարձաւ և նահանջեց:

— Յաղթութիւն, յաղթութիւն, կէցցէ հայ ազգը, որոտագին բացականչեցին ոգեւորված տղերքը և կանգ առան կռվելուց:

— Բարըւըդ, բարըւըդ, աղերսում էին թուրքերը, շէյթանին նզովելով:

— Այժմ արդէն բարըւըդ, երբ փորձեցիք հայ կտրիճի բազուկները, պատասխանեցին հայերը:

Լուեց ամեն ինչ... փոթորիկն անցաւ. միայն կրակն էր շարունակում իր լափումը, որը սակայն մօտ էր վախճանին: Լուութեան մէջ տարածվում էին վերաւորների աղէկատուր հեծկլտանքները:

— Վայ, մայրիկ ջան, օգնեցէք... մեռայ... լավում էր հայերէն և թուրքերէն լեզուով:

Լուսացաւ. գիշերային ահուելի դժոխքը վերածվեց մարդկային մի մեծ սպանդանոցի. հէքիաթական աշխարհի իրականութիւնն էր կենդանացել. ամբողջ թաղեր կրակի ճարակ էին դարձել, որոնց մէջ ցցված էին մխող աւերակները. կանգուն մնացած սնների պատերն ու դռները ծակոտվել էին զընդակներից. ապակիները ջարդուփշուր եղել. հայի և թուրքի տաք-տաք դիակները ընկած էին իրար կողքի. բաւական շատ կային այլանդակված, մաս-մաս արած հայերի դիակներ, գլուխը կամ ձեռքերը կտրած.

շները ուսում էին մարդկային մարմնի մասերը և քարշ տալիս փորոտիքը. նրանցից ծօրում էր արիւնը, որը վտակներ կազմած հոսում էր, տանելով հարիւրաւոր մարդկանց կեանքեր: Իսկ կենդանի մարդկանց սուգ ու շիւանը տարածվելով այդ յղփացած օդում, սարսուռ էր տարածում չորս կողմ: Հայ ու թուրք՝ լալազին փնտրտում էին իրանց մեռելները, սրտի խորքերից անիծելով այդ արիւնհեղութեան պատճառը: Մահը միահեծան թագաւորում էր գիակների և աւերակների վրայ...

Հեռվից քաղաք էր շտապում զօրքը, կարգը վերականգնելու. բայց արդէն ուշ էր. ամեն ինչ կատարված էր...

— Տին-տօն, տին-տօն, մեկամաղձոտ մեղեդիով զօղանջում էին հայ եկեղեցու փոքրիկ գանգակները, աշխատելով Աստու. գութը շարժել այդ արիւնոտ տեսարանով...



Ազգային գրադարան



NL0323885

Նոյն հեղինակի լոյս տեսած աշխատանի-  
քութիւնները՝

- 
- |  |    |    |
|--|----|----|
| 1. ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍԷՐ (վէպիկ) գինը .                     | 30 | կ. |
| 2. ԳՐԲԱՅԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ (պատկեր) գ.                      | 5  | »  |
| 3. ԿԵԱՆՔԻ ԲՕՄԱՆԻՑ (վէպիկ) գ.                         | 25 | »  |
| 4. ԷՄԻԼ ԶՕԼԱ (փոքրիկ տեսութիւն) գ.                   | 5  | »  |
| 5. ԼՕՆՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ (պատկեր) գ.                        | 8  | »  |
| 6. ԲԱՅՅԻ (համառօտ տեսութիւն) գ.                      | 10 | »  |
| 7. ԿԵԱՆՔԻ ԽՈՐՇԵՐԻՑ (պատկերներ) գ.                    | 20 | »  |
| 8. ԱՌԱՋԻՆ ՄՈՒՐԱՅԿ ՆՈՒԹԻՒՆԸ (պատ.)                    | 8  | »  |
| 9. ԱՐԲԵՑՈՂԻ ԶԱՏԻԿԸ (պատկեր) գ.                       | 3  | »  |
| 10. ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷՔԸ (վարկիւ) գ.                     | 15 | »  |
| 11. ԹՇՈՒԱՌՆԵՐ (պատկեր) գ.                            | 8  | »  |
| 12. ՄԻԵՒՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ... ք. տպագ.<br>(պատկերազարդ) . | 7  | »  |
| 13. ՍԻՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ (պատկեր) գ.                      | 10 | »  |
| 14. ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ (պատկեր) գ.                        | 7  | »  |

Թ ա ր գ լ ա ն ու լ թ իւ ն ն Ե Ր Չ՝

- |   |    |    |
|---|----|----|
| 1. ԱՆԻԻՏԱ (Չեխովից) գինը.                                 | 3  | կ. |
| 2. ԴԻՄԱԿ (Չեխովից) գ.                                     | 5  | »  |
| 3. ՆԻՆԻԻ ՀԱՄԱՐ գ.   | 3  | »  |
| 4. ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ գ.                                   | 15 | »  |
| 5. ՃԱՊՈՆԻԱ գ.   | 25 | »  |
| 6. ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒ-<br>ԹԻՒՆԸ (Կլար Յևտկինի) գ. | 15 | »  |

Դիմել թիֆլիսի հրատարակիչներին, գրա-  
վաճառներին և հեղինակին:

(Հաւարար. Լազարևսկայեա փողոց տ. Մու-  
րազովի № 49):